**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2/5.1.1-24**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային
հանձնաժողովի հայտերի բացման նիստի

2024թ. մայիսի 29-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

**Նիստին մասնակցում էին՝**

| | | |
|---|---|---|
| Ս.Հակոբյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ |
| Ա.Մկրտչյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ |
| Ս.Ասլիզադյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ |
| Ս.Հովհաննիսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ |
| Հ. Սահակյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Ա.Սողբաթյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար |
| Լ.Պետրոսյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական |
| Շ.Հովսեփյան | - | ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար |

Քվորումն ապահովված է:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

***Որոշեցին՝***

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

***Լսեցին՝***

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

**Նշվեց, որ**

1. Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման համար մրցույթին ներկայացվել է 1 (մեկ) հայտ՝ «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝ «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին, սակայն կազմաերպության հայտին կից ներկայացված ֆինանսական նախահաշիվը ունի խմբագրման կարիք: Մասնավորապես անհրաժեշտ է վերանայել ֆինանսական առաջարկը՝ առանձին տողով նշելով ԱԱՀ վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև հստակեցնելով ֆինանսական առաջարկի որոշ տողեր՝ համապատասխանեցնելով սույն մրցույթի հրավերի 2.4.1 կետի պահանջներին (այդ թվում՝ գինեգործարանների, տրանսպորտային ծառայությունների նկատմամբ պահանջների հստակեցում և այլն):

***Կայացավ քննարկում, որի արդյունքում***
***Հանձնաժողովը միաձայն որոշեց՝***

1. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ն:

2. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի Ծրագրի հավելված 2-ի 5.1 միջոցառման «Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում առնվազն մեկ միջազգային միջոցառման կազմակերպում» 5.1.1 ենթամիջոցառման իրականացման համար հաղթող ճանաչվող «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի հետ՝ նախահաշվային փաստաթղթերի խմբագրված տարբերակը ներկայացնելու դեպքում:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ա.Մկրտչյան -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Ա.Սողբաթյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան -